**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի**
**Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**2026 թվականի թիվ 112- Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՕՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 16-րդ հոդվածի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով՝

**Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.**

- ✓ Մարզի բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման ապահովման, ֆիզիկական պատրաստականության մակարդակի, աշխատունակության բարձրացման, ինչպես նաև ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն երիտասարդ սերնդի ձևավորմանը խթանելու նպատակով 2026 թվականի մայիսի 13-ը հայտարարել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր:
- ✓ Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություններին՝ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օրվա պատշաճ անցկացումը:

Восстановимая подпись

X

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639 **Վ. ԱՐՍԵՆՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**

**2026 թվական մայիսի 5**